ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

E-mail Paraqar@rambler.ru Հեռ. 231-6-00-42

www.parakar.am

1149, գ. Փարաքար, Նաիրի 42

04.09.2013 թ. N 451

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Աշոտ Սարգսի

ՈՒղարկվում է Փարաքարի գյուղական համանքի ղեկավարի կողմից 2013 թվականի օգոստոս ամսվա ընթացում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Կից 6 թերթ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կատ.՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2013թվականի N 57-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի ,,Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին,, N 15- Ն որոշումը և Վարդան Գրիգորյանի 2013 թվականի օգոստոսի 5-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար գյուղի Կոմիտասի փողոցի թիվ 14 հասցեում գործառնական նշանակությունը, որպես թռչնաբուծական ֆերմա օգտագործվող Վարդան Վանիկի Գրիգորյանի սեփականությունը հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2839547, տրված 25 հոկտեմբերի 2011թ.) 651.1 քմ շինության և 0.55 հա հողատարածքի գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերական նշանակության :

2. Սույն որոշումից բխող գործառնական նշանակության փոփոխությունները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետականկան կոմիտեի աշխատակազմի Արմավիրի ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 13 թ. օգոստոսի _ 07
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2013թվականի N 58-Ա

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի ԹԻՎ 53-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է 1965 թվականին, բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 500.0 քմ. հողամասին կից ավել օգտագործվող 120.0 քմ սահմանազատված հողամասը Դավիթ և Ֆրունզե Հարությունյանների կողմից տիրապետվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը որպես սեփական գույք, հիմք ընդունելով համասեփականատեր Դավիթ և Ֆրունզե Հարությունյանների լիազոր անձ Սուսաննա Սեյրանի Ստեփանյանի 2013 թվականի հուլիսի 15-ի դիմումը և նկատի ունենալով , որ տնամերձ հողամասը,կից հողատարածքը և բնակելի տունը ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ. ո ր ո շ ու մ ե մ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի վարչական տարածքի Փարաքար գյուղում Ամալյա Արշակի Կարապետյանի, ծնված 01.01.1931 թ., Դավիթ Վահրամի Հարությունյանի, ծնված 11.09.1985 թ. և Ֆրունզե Վահրամի Հարությունյանի , ծնված 18.09.1987 թ., սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 500.0 քմ մակերեսով հողամասին կից ավել օգտագործվող 120.0 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 120.0 քմ մակերեսով հողամասի և 500.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք - շինությունների նկատմամբ՝ համաձայն հողամասի հատակագծի և շինությունների բնութագրի, տրված 2013 թվականի հուլիսի 15-ին ,,Աստղիկ Մանուկյան,, անհատ ձեռնարկատերի կողմից ըստ որակավորման թիվ 096 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:

2. Բնակելի տանը և հողատարածքին տրամադրել հասցե.Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ գյուղ Փարաքար, Էրեբունի փողոց տուն 35:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի հուլիսի 16-ի ,,Տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին,, թիվ 53-Ա որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2013 թ. ___ օգոստոսի _20
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2013թվականի N 59-Ա

ԼՅՈՒԴՄԻԼԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային տարածքային ստարաբաժանման 18.12.2012 թվականի թիվ ԱՏ-13/12/2012-1-0277 տեղեյանքը, հատակագիծը և Լյուդմիլա Կոլյայի Ասատրյանի դիմումը և նկատի ունենալով , որ տնամերձ հողամասը և դրա վրա կառուցված բնակելի տունը չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ. ո ր ո շ ու մ ե մ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի վարչական տարածքի Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոցի թիվ 119 հասցեում Լյուդմիլա Կոլյայի Ասատրյանի (անձնագիր AC 0333121, տրված 01.07.1998 թ.,057-ի կողմից) սեփականության իրավունքը 2488 քմ հողատարածքի և այդ հողատարածքի վրա գտնվող 711 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան և 26.7 քմ մակերեսով պարսպի նկատմամբ:
2. Ընդունել ի գիտություն, որ նշված հողամասում առկա են 253.2 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ, այդ թվում բնակելի տան կցակառույց /նկուղ երկու հարկանի/՝ 36.72 քմ, բնակելի տան կցակառույց/երկու հարկանի/՝ 145.3 քմ, օժանդակ շինություններ, զուգարան՝ 2.8 քմ, լողավազան՝ 42.3 քմ, ծածկող՝ 26.6 քմ:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Մարիետտա Քեյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 13 թ. _օգոստոսի __ 23
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 օգոստոսի 2013թվականի N 46-Ա

ԳԵՂԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով և 167-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 55-Ա կարգարությունը և Գեղամ Գասպարյանի 2013 թվականի օգոստոսի 16 -ի դիմումը. կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի խորհրդատու Գեղամ Գասպարյանին 2013 թվականի օգոստոսի 26 -ից տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա իր արձակուրդի մնացած մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:

2. Գեղամ Գասպարյանին աշխատանքի մեջ համարել 2013 թվականի սեպտեմբերի 9-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2013թ. _օգոստոսի _20
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 օգոստոսի 2013թվականի N 47-Ա

ՄԱՐԳՈ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 16 -ի թիվ 02/07.1/2975-13 գրությունը. կարգադրում եմ՝

1, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Մարգո Մարգարյանին գործուղել Արմավիր քաղաք՝ մասնակցելու համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին՝ 2013 թվականի օգոստոսի 20-ից մինչև օգոստոսի 30-ը:

2. Ֆինանսական բաժնին՝ սահմանված կազով կատարել գործուղման ծախսերի վճարումը:

3.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2013թ. _օգոստոսի_ _20
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21 օգոստոսի 2013թվականի N 48-Ա

ՍԱԹԵՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշման N1 հավելվածի 10-րդ կետով և հիմք ընդունելով Սաթենիկ Ստեփանյանի 2013 թվականի օգոստոսի 21-ի դիմումը. *կարգադրում եմ՝*

1, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի Թաիրով գյուղի գրադարանի վարիչ Սաթենիկ Ստեփանյանին 2013 թվականի սեպտեմբերի 1-ից տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 20 աշխատանքային օր + 5 լրացուցիչ օրացուցային օր:

2. Աշխատանքի մեջ համարել 2013 թվականի հոկտեմբերի 7-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2013թ. օգոստոսի _ __21-
գ.Փարաքար